Հայտարարություն

Էլ.հասարակության և մրցունակության համար նորարարության ծրագիր

No: 7963-AM

ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկը հայտնում է, որ Համաշխարհային բանկի «**Էլ.հասարակության եւ մրցունակության համար նորարարության**» վարկային ծրագրի շրջանակում **«Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի /ք. Վանաձոր/ հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողություն» եւ «Նորարարարական լուծումների եւ տեխնոլոգիաների կենտրոնի /ք.Երեւան/ հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողություն»** իրականացնելու նպատակով հայտարարվում է խորհրդատվական ընկերությունների ընտրության մրցույթ:

Ընտրված խորհրդատվական ընկերությունները պետք է իրականացնեն հիմնանորոգման աշխատանքների ընդհանուր հսկողությունը, ապահովեն աշխատանքների կատարման բարձր որակը եւ համապատասխանությունը աշխատանքների կատարման ժամանակացույցի, նախագծա-նախահաշվային փաստաթղթերի, կանոնակարգերի, շինարարության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների եւ գործող շինարարական նորմերի հետ:

Խորհրդատուն պետք է իրականացնի հետեւյալ առաջադրանքները՝

- կազմակերպի պարբերական այցելություններ հիմնանորոգվող տարածք Պատվիրատուի հետ համաձայնեցրած ժամանակացույցին համաձայն,
- հետեւի հիմնանորոգման աշխատանքների կատարման որակին, ինչպես նաեւ ստուգի դրանց կատարման համապատասխանությունը նախագծերի, շինարարական եւ անվտանգության նորմերի, չափորոշիչների ու տեխնիկական մասնագրերի հետ,
- ստուգի հավաստագրերի եւ հիմնանորոգման համար օգտագործված նյութերի որակը հաստատող լաբորատոր անալիզների ու ստուգումների արդյունքները: Կատարված աշխատանքների որակի անբավարարության դեպքում համապատասխան գրությամբ արգելի դրանց շահագործումը,
- ստուգի, արդյո՞ք հիմնանորոգվող տարածքում առկա են բոլոր անհրաժեշտ նշագրումները հիմնանորոգման աշխատանքների ողջ ընթացքում,
- ստուգի, արդյո՞ք ապահովված են աշխատողների առողջության եւ անվտանգության պահպանման կանոնները,
- ստուգի շինարարական աղբի հավաքման եւ շինհրապարակում պահուստավորման պայմանները,
- գրանցի բոլոր զննումների արդյունքները, դիտողությունները եւ հայտնաբերված թերությունները եւ առաջարկի այդ թերությունները շտկելու հնարավոր տարբերակներ,
- կազմի թերի աշխատանքների եւ էական խախտումների ցուցակ, նշելով դրանց վերացման ժամկետները եւ անհապաղ տեղեկացնի ՁԻՀ-ին,
- վարի հիմնանորոգման ընդհանուր աշխատանքների մատյան, կատարի ամենօրյա կանոնավոր գրանցումներ ավարտված աշխատանքների մասին,
- ստորագրի կատարողական ակտերը, որոնք կապալառուն ներկայացնում է վճարում ստանալու համար: Խորհրդատուն պատասխանատու է կատարողական ակտերով ավարտված աշխատանքների պիտանիության եւ որակի համար,
- ստորագրի աշխատանքների ավարտումը հաստատող միջանկյալ եւ վերջնական ակտեր,
- դադարեցնի աշխատանքները, եթե դրանք իրականացվում են հաստատված նախագծերի, տեխնիկական մասնագրերի, շինարարական նորմերի խախտումներով կամ անորակ նյութերի, կառուցվածքների եւ կոնստրուկցիաների օգտագործմամբ,

- կապալառուին հրահանգի առկա թերությունների եւ խախտումների շտկման վերաբերյալ և այլն:

Ծառայությունները նախատեսվում է իրականացնել 2015թ. հուլիսից մինչեւ շինարարության ավարտը:

Խորհրդատուն պետք է բավարարի հետեւյալ որակավորման չափանիշներին, նա պետք է ունենա՝

- Շինարարության վերահսկիչի առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ,
- ՀՀ Քաղաքաշինության նախարարության 2008թ. թիվ I - 3.01.01 "Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգի" իմացություն,
- Հայկական եւ/կամ օտարերկրյա ընկերությունների պատվերով իրականացված առնվազն 2 նմանատիպ վերահսկողական աշխատանքների փորձ,
- Հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության արտոնագիր:

Վերը շարադրված պահանջներին համապատասխանող խորհրդատվական ընկերությունները կարող են մինչեւ **սույն թվականի մայիսի 22-ը** ներկայացնել հետաքրքրվածության հայտեր անհրաժեշտ տեղեկություններով (ընկերության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն՝ ընդհանուր աշխատանքային փորձի, այդ թվում վերջին տարիներին նմանատիպ հանձնարարականների իրականացման փորձի, վերընշված պահանջներին բավարարող անձնակազմի առկայության վերաբերյալ, հիմնական աշխատակազմի կենսագրական թերթիկները եւ այլն) ստորեւ նշված հասցեով:

Ընկերությունները կարող են դիմել վերոնշյալ մեկ կամ երկու կենտրոնների համար:

Հետաքրքրվածության հայտերը կարող են ներկայացվել նաեւ էլեկտրոնային փոստով՝ պարտադիր նշումով, թե որ կենտրոնի վերահսկողության համար են դիմում:

ՀՀ Ֆինանսների նախարարության
«Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական
հիմնարկի գործադիր տնօրեն՝ Էդգար Ավետյանին
Երեւան 0010, Տիգրան Մեծի պողոտա 4, 3-րդ հարկ
Հեռախոս. (037411) 910 581, 910 590
Էլ. փոստ. info@ffpmc.am